

Արմեն Ավանեսյան

Բ.գ.թ.

ՀՀ ԳԱՍ Մ. Աբեղյանի անվան
գրականության ինստիտուտ

ԿԱՐԻՆԵ ԽՈՂԻԿՅԱՆԻ ԱՐՁԱԿԻ ՊՈԵՏԻԿԱՆ

Բանալի բառեր - պատմող, պատմություն, անկախություն, պատմվածք, արձակ, ժամանակ, դիրքորոշում, կերպար, հոգեբանություն:

Անկախության տարիների գրականության ամենակենսունակ ժանրերից մեկը պատմվածքն է, որն ի հայտ բերեց բազմազան դրսևորումներ և նոր ու թարմ իրացումներ: Պատմվածքն իբրև փոքր արձակի նմուշ՝ գրողին ավելի սեղմ արտահայտվելու հնարավորություն է տալիս: **Կարինե Խողիկյանի** արձակը անկախության գրականության ուշագրավ երևույթներից է:

Դեռևս 1990-ական թվականներին գրական մամուլում հիմնականում երևում էին Խողիկյանի հրապարակախոսական և ակնարկային արձակ էջերը: Սակայն երբեմն դրանք ընդմիջարկվում էին պատմվածքներով, որոնք նոր իրացումների հնարավորություններ էին ուրվագծում:

Անշուշտ, այս շրջանի պատմվածքներում առավել ընդգծված էր **պատմողը**, ով դիպաշարի և գործողությունների թելադրող էր: Պատմող-հեղինակը հիմնականում շեշտը դնում է կերպարների հոգեբանական բացահայտման վրա: Կյանքի մեկ դրվագ վերցնելով, գրողը ոչ թե կարևորում է պատմության ընթացքը, այլև ներքին մանրագծերով ընդգծում է մարդկային ճակատագրերն ու հերոսի հոգեբանական զարգացումը:

«Կտակը» պատմվածքում տիկին Շուշանը մահվան մահճում ոչ միայն իր ունեցվածքն է բաժանում հարազատներին, այլև այս դրվագի իրողությամբ հեղինակը ի ցույց է դնում նրա կյանքի էական կողմերն ու հարաբերությունները նույն հարազատների հետ: Մյուս կողմից, ընթերցողի աչքի առջև կերտվում է ուժեղ կնոջ՝ մոր կերպարը, որն ասես շարունակությունը լինի մաթևոսյանական Աղունի. «- Վրա չտայի, հիմի

վրաս վայնաստուն էիք կապել, ես ո՞ր մեկիդ բերանը փակեի,- դիմադարձեց Շուշանը:- Տեսաշեններ, կողքից ձեզ տեսնեիք՝ Էն կերպարանքով ներս մտաք, իմացա՝ արդեն յոթ օրվա մեռել եմ»¹:

«Այլ կերպ լինել չէր կարող» պատմվածքում աշխատակիցների միջև սիրավեպն ունի ներքին հոգեբանական ընթացք: Ներսն ու դուրսը կարծես հակադիր են միմյանց: Հերոսներն արտաքինապես լուռ են ու չեն շփվում իրար հետ, սակայն սիրող հոգիներում փոթորիկ է՝ անդիմադրելի: Այնինչ, սիրո վայելքի կայացմանը խանգարող մի կարևոր տաբու կա. տղամարդն ամուսնացած է, ընտանիք ունի և սիրո ամենակրքոտ արտահայտությունը լինում է երեկույթի ժամանակ երկուսի պարը՝ անմեղ ու մեղավոր պարը:

Ընդհանուր առմամբ, Խողիկյանի այս շրջանի պատմվածքներում նկատելի է հեղինակի հատուկ ուշադրությունը կնոջ ազատագրման թեմային: Նոր ժամանակները (անկախություն, խոսքի ազատություն և այլն) ենթադրում են նոր մոտեցումներ և գրողը թարմացնում է կանացի կերպարի առանձնահատկությունները: Դասական գրականությունից հայտնի զուսպ, համեստ, ամուսնական կյանքում խոնարհ կնոջը փոխարինելու է գալիս մի քիչ երեսառած, հանդուգն, գործնական, անզամ անզուսպ կնոջ տիպը:

«Ետյուր» պատմվածքում կնոջ ու տղամարդու երկխոսությունն է, սակայն գրողը հետաքրքիր հնարանք է կիառում շեղագիր ներկայացնելով իրականում այն, ինչ մտածում են հերոսները... Այս դեպքում արդեն իսկ ուրվագծվում է կնոջ՝ կապանքներից ազատվելու ջանքը. «Ես ի՞նչ անեմ,- մտածեց Կինը:- Ինչպե՞ս վարվեմ, որ կարողանամ ճեղքել նրան շուրջկալած բառերի պարիսպը... թո՛ւ, ճիշտ որ, հիմար-հիմար դուրս եմ տալիս: Ինքս ինձ հետ էլ էնպես եմ խոսում, ասես բեմի վրա եմ, հանդիսատեսի առաջ: Բայց, սպասիր, ես ի՞նչ մեղք ունեմ, որ իրեն փակել է հիմար բառերի մեջ ու ես, ստիպված, ուրիշ հիմար բառերով փորձում եմ ներս մտնել ու նրան գտնել այդ պարսպից այն կողմ... ինչ-որ տեղում»²: Այսպես, գրողը կրկնակի երկխոսություն է ներկայացնում արտաքին, այն ինչ ասում են հերոսները բառերով և ներքին, հոգևոր՝ այն ինչ իրականում մտածում են նույն հերոսները և որն էլ նրանց ապ-

1 Խողիկյան Կարինե, Մեծ եռագրություն, հատոր 3, արձակ, Երևան, Արմավ, 2016, էջ 16:

2 Նույն տեղում, էջ 11:

րումի հիմնական շարժիչն է: Այսինքն, այս գործում երկու դիպաշար միահյուսվում են մեկ առանցքի շուրջ:

Հերոսուհին արդեն իսկ արտաքին կապանքներից ազատագրված է «Տարվա այդ եղանակը» պատմվածքում: Երկու ախոյան կանայք են՝ «պետ»-ի սիրուհիները, որոնցից մեկն արդեն «տարիքն առած» է, գիրուկ, իսկ մյուսը՝ «վառեկ», նիհարիկ, երիտասարդ ու հանդուգն: Տարբեր սերունդներ են ու տարբեր մտածողություններ: Ավագ սիրուհին կարգի է հրավիրում երեսառած երիտասարդին, սակայն վերջինս հակադարձում է ավելի անզուսպ ու անկաշկանդ. «- Էդ ծխելը թող, դեռ ջահել ես, կյանքդ առջևում է,- մտքում էլի զգվեց՝ ո՞ր օրվա բարոյախոսն է:- Հա՛, կյանքդ առջևում է,- նիհարիկի հեգնական-խոցված հայացքից ավելի զգված-անպաշտպան դարձավ:- Ինչ է, ողջ կյանքդ միայն անարժան, կամ էլ անողնաշար տղամարդո՞ւ ես հանդիպելու... Գոնե մեկը կլինի...

- Ըհը,- հոժարակամ ձայնը քաղցրացրեց նիհարիկը:- Բա ո՞նց, քեզ չհանդիպե՞ց, որ ինձ էլ չհանդիպի»¹:

Սակայն երկուսի հոգեբանական ելակետը նույնն է. նրանք սոսկ սիրուհի են, երկրորդված և այս դեպքում արդեն տարբեր սերունդներ, հանդգնություն ու համեստություն, սև թե սպիտակ, նույնանում են: Ուստի նրանք ավելի շատ կարեկից են միմյանց՝ ինչպես մայր և դուստր: Հենց կարեկցանքի միջոցով էլ կայանում է հերոսների ներքին, հոգեկան ազատագրումը:

2000-ական թվականներին Կարինե Խոդիկյանի հեղինակությամբ երևացին նոր որակի պատմվածքներ: Պահպանելով ոճի ինքնությունը, գրողն իր պատմվածքները հարստացրեց առանձնահատուկ **պատմության** դիպաշարի համադրումով: Կենսափաստին հաճախ զուգահեռվում էր միստիկան ու մոգականությունը: Սա սոսկ լատինամերիկյան մոգական ռեալիզմը չէր: Գրողը ստեղծում է այնպիսի տեքստ, որտեղ հեսսեական ներաշխարհային իրականությունը շաղկապվում է բորխեսյան ինտելեկտուալ հղումներին, որն ամբողջանում է Էդգար Պոյի հատուկ միստիկ-մոգական ելևէջումներով: Այս շրջանի պատմվածքները դեդեկտիվային կամ թրիլերային բնույթ ունեն:

«Ջրահեղձը» պատմվածքում գործողությունների զարգացումը

1 Նույն տեղում, էջ 32:

միաստիկական է: Ջրահեղձի թաղման թափորը պետք է անցնի փողոցով և ահա՝ տներից մեկում տագնապ է, քանզի երիտասարդ հարսը չպետք է տեսնի ջրահեղձի դին: Սակայն երիտասարդ կինը հայտնվում է պատշգամբում և ջրահեղձը կանչում է նրան՝ արի՛, ու՝ «...ընկրկած Տան Հարսի ոտքը կպավ օղու դատարկ շշին, շիշը ճայթյունով պայթեց, պայթյունի ալիքը գրկեց, գալարապտույտ վեր բարձրացրեց նրան ու շարտեց փողոցի սալաքարերին՝ դագաղի առաջ»¹:

«Սև մահճակալը» պատմվածքում գրողը անդրադառնում է մանկությունից մարդուն ուղեկցող վախերին: Մանկական մաքուր աշխարհը բախվում է մարդու կողմից հորինված մութ սարսափներին, որոնք հետք են թողնում մարդկային հոգում և ուղեկցում մինչ ի մահ:

«Հացի ու մահվան հոտը» պատմվածքում կյանք-մահ հակասությունները մեկտեղվում են: Տոհմիկ գերեզմանափորը, ում վրայից անընդհատ մահվան հոտ է գալիս, ամուսնանում է հացթուփի հետ և հացի բույրը հաղթահարում է սերնդե-սերունդ թանձրացած մահվան հոտին:

Չուգահեռ ստեղծվեցին մերօրյա իրականությունը պատկերող ու **Ժամանակի** խոցելի հարցադրումներով հագեցած պատմվածքներ:

Գրողը մատը պահելով օրվա զարկերակին, առաջ է քաշում բարոյական չափանիշների անկման խնդիրը՝ հղում կատարելով աստվածաշնչյան տեքստին:

2008 թվականի մարտի 1-ը յուրօրինակ պատմվածք-պատմվածաշարով և այլաբանական մոտիվներով է պատկերում հեղինակը: Հիմքում ունենալով վավերական փաստ և որոշակի ժամանակ, գրողը համաժամանակյա խնդիրն է առաջ քաշում և տալիս ժամանակի բարոյալքման նկարագիրը: Այս պատմվածաշարում հերոսը քաղաքն է, որի փողոցներում անմեղ մարդիկ են սպանվում:

Երբ ծեծի ենթարկվելով սպանվեց բժիշկ Վահե Ավետյանը, Կարինե Խողիկյանը յուրովի արձագանքեց կատարված ոճրին: «Հինգերորդի լռությունը» պատմվածքում ոճիրը խարան է թողնում ոչ միայն ոճրագործի, այլև նրա ընտանիքի ճակատագրին:

Գրողն անկաշկանդ արտահայտում է իր դիրքորոշումը ժամանակի նկատմամբ: Երբ երկիրը թողնում հեռանում են («Օպուս N» պատմվածքը), ոչ միայն հողն ու տունն է դատարկվում, այլև՝ հեռացողների

1 Նույն տեղում, էջ 172:

հարազատների հոգիները: Դարեր ի վեր հայր թողել է իր օրրանն ու կյանք փնտրել օտար երկրներում: Եթե պետականության բացակայության պայմաններում այս հանգամանքը ինչ-ինչ ձևով բացատրելի էր, ապա ներկա ժամանակներում, երբ հայրենիքը նաև երկիր է, անընդունելի դառնում է կենսակերպ, քանզի բարոյական չափանիշներն են խաթարված:

Հենց խաթարված բարոյական չափանիշներին է անդրադառնում հողիկյանը «Հինգ մեքենա՝ ճամփեզրից այնկողմ» հնգասյուժե պատմվածքում: Թվում է իրարից առանձին հինգ դեպքեր են պատկերվում, բոլորն էլ՝ ոճի և անմիջապես հետևող պատիժ: Արատավորված, մեղքերի մեջ թաթախված հանրությունը անուշադրության է մատնվում բովի նման գետնին պառկած ներբաններից լույս արձակող մարդուն, ով խորհրդանշում է խիղճը, բարությունը, մաքրությունը և փաստորեն մարդն իր կենսակերպով ինքն իրեն ոչնչացնում է:

Այսպիսով կարելի է ասել Կարինե հողիկյանը իր պատմվածքներով գեղարվեստականացնում է այսօրվա հերոսին, այսօրվա պատմությունն ու դառնում մեր օրերի տարեգիրը:

Արմեն Ավանեսյան - Գիտական հետաքրքրությունները հայ և համաշխարհային նորագույն, ինչպես նաև սփյուռքի և արդի գրականության հիմնախնդիրներն են: Հեղինակ է չորս մենագրության և յոթ տասնյակից ավելի հոդվածների: ՀՀ ԳԱԱ Մ. Աբեղյանի անվան գրականության ինստիտուտի ավագ գիտաշխատող է: Արժանացել է ՀԳՄ Նիկոլ Աղբալյանի անվան գրականագիտական մրցանակի:

ARMEN AVANESYAN - THE POETICS OF KARINE KHODIKYAN'S PROSE -

Karine Khodikyan's prose is one of the remarkable aspects of independence literature. In her stories, the narrator was more emphasized, who was the dictator of the plot and actions.

The author's special attention to the issue of women's liberation is noticeable.

Preserving the identity of the style, the writer enriches his stories by combining a special story plot. Mysticism and magic were often associated with biodiversity. At the same time, the vulnerable questions of today's reality and time are depicted. The writer freely expresses her attitude towards time. Karine Khodikyan articulates today's hero, today's history with her stories and becomes the annals of our days.

Keywords: narrator, story, independence, story, prose, time, position, character, psychology

АРМЕН АВАНЕСЯН - ПОЭТИКА ПРОЗЫ КАРИНЕ ХОДИКЯН - Проза Карине Ходикян - одно из самых замечательных произведений литературы независимости. В ее рассказах больше подчеркивался рассказчик, диктующий сюжет и действия. Заметно особое внимание автора к проблеме женского раскрепощения. Сохраняя самобытность стиля, писатель обогащает свои рассказы, сочетая особый сюжет. Мистика и магия часто идут параллельно с жизнью. В то же время изображены уязвимые вопросы сегодняшней реальности и времени. Писатель свободно выражает свое отношение ко времени. Карине Ходикян своими рассказами излагает сегодняшнего героя, сегодняшнюю историю и становится летописцем наших дней.

Ключевые слова: рассказчик, рассказ, независимость, повесть, проза, время, позиция, персонаж, психология.

REFERENCES

1. **Karine Khodikyun**, Mec Yeragutyun, Yer., «Arnav» hrat., 2016 (in Armenian).